

Թվերը գրելու հնամենի եղանակը

Թվերի գրառումը հայերենի այբուբենի տառերով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Յ	Ի	Փ	Զ
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Օգտվելով այս աղյուսակից լուծեք խաչքառը:

Խաչքառ

Հարցերը լուծեք բանավոր և ներկայացրեք հայերենի այբուբենի տառերով:

Հորիզոնական

- Որքանով կմեծանա երկնիշ թիվը, եթե նրան ձախից կցագրենք 5 թվանշանը:
- Գտեք ամենափոքր գույգ երկնիշ թվի և 40-ի արտադրյալը:
- Գտեք ամենամեծ եռանիշ թիվից 399-ով փոքր թիվ:
- Եթե Դավիթի մտապահած թվից հանեք 200, ստացած թիվը փոքրացնեք 2 անգամ կաստանաք 2400:
- Գտեք 2800 և 40 թվերի քանորդը:
- Ո՞րն է ամենափոքր կենս թիվը:
- Գտեք ամենափոքր քառանիշ թվի եռապատիկը:
- Ո՞ր թիվն է մտապահել Արամը, եթե նրա մտապահած թվի և 256-ի տարբերությունը 344 է:
- Գտի՛ր այն թիվը, որը 24-ի բաժանելիս ստացվում է 208 և 8 մնացորդ:

Ուղղաձիգ 1.

- Ո՞րն է ամենափոքր բնական թիվը:
- Ո՞ր թիվն է մտապահել Սարգիսը, եթե 640-ի և նրա մտապահած թվի տարբերությունը 440 է:
- Գտեք ամենափոքր քառանիշ թվի և ամենամեծ եռանիշ թվի տարբերությունը:
- Ն
- Ո՞ր թիվն է մտապահել Նարեկը, եթե նրա մտապահած թվի կրկնապատիկի և 30-ի քանորդը 40 է:
- Որքանո՞վ է 235 և 65 թվերի գումարը փոքր 5300-ից:

Ուղղաձիգ 2.

- Ո՞ր թիվն է մտապահել Աննան, եթե նրա մտապահած թվի և 1250-ի տարբերությունը 750 է:
- Գտի՛ր այն թիվը, որը 7-ի բաժանելիս ստացվում է 85 և 5 մնացորդ:
- Գտեք ամենափոքր հնգանիշ թվի և ամենափոքր քառանիշ թվի եռապատիկի տարբերությունը:
- Ը
- Ո՞րն է ամենափոքր զույգ թիվը:

Ուղղաձիգ 3.

- Ո՞րն է ամենափոքր երկնիշ թվի հնգապատիկը:
- Ո՞րն է 240000 և 600 թվերի քանորդը:
- Ո
- Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրան ձախից կցագրենք 7 թվանշանը:
- Ո՞րն է ամենափոքր եռանիշ թվի քառապատիկը:
- Ո՞րն է 960 և 240 թվերի քանորդը:



